Իբրու մըղեղ չընչմամբ հողմոյ անցանի,
Միայն հաւատն և բարի գործն ընտանի.
Անզոյգ ճրագ վերնոյ ուղղոյ արժանի.
Խեղճուկ Գասպար Մեծ Ամուճայ կոչեցեալ
Սեբաստացի որդի Արթնոյ անուանեալ
Համայնլոյդ ոյք հանդիպիք գթացեալ
Խնդրեմ ասել լիցի յէէն ողորմեալ։
Ի թվին հայոց ՌԲՃ (=1751).
Մայիսի մէկին»։

ԳԱՍՊԱՐ ԵՊՍ.— Մբ. Առ. Եգիպտոսի. Փարիզի Ազգ. մատենադարանի հայ ձեռագրաց ցուցակին մէջ, Գասպար Եպս.ի անուամբ իբր առ. Եգիպտոսի կը գտնուի գրութիւն մը որ ստորագրուած է նոյնին կողմէ իբրԴաւանական գիր մը (CMA. էջ 78)։

ԳԱՍՊԱՐ (ՄՀՏ.) ՈՐԴԻ ԹՈՎՄԱՅԻ ՋՐԲԱՂԵՆՑ, ՎԱՆՑԻ.— 1779ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ ձեռագիր Աւետարան մը, ըստ այս յիշատակարանի (Մձ. թ. 43) «Յիշատակ է զեղեցկանըկար սուրբ Աւետարանս աթոռոյս Սրբոյն Յակոբայ. զոր եդ ի յարդար արդեանցն, մականուամբ յորջորջեալ Զրբաղենց հանգուցեալ լուսահոգի վանցի Թովմայի որդի կենդանի Մահտեսի Գասպարն։ Արդ՝ որք վայելէքդ զսուրբ աւետարանս և ընթեռնուք. յիշեսջիք միով Հայր մերիւ ի Քրիստոս զվերոյգրեալ մահտեսի Գասպարն եւ զհանգուցեալ ծնողն իւր Նազլուն. եւ զկենդանի կողակիցն իւր Եղիսաբեթն և զորդիսն նորին զԱխիճան և զմահտեսի Փիլիպպոսն, զյիսաճանն և զՅակոբն և զդուստրն նորին Մարիամն, որ և յիշողքդ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ յԱստուծոյ մերմէ, ամէն»։ (Խաչ. Ցուց. տետր Դ. էջ 305—6)։

ԳԱՍՊԱՐ (ՄՀՏ.) ՊԱԼԱԹԵՑԻ.— (ՄՁ. թ. 44) ձեռագրին յիշատակարանէն. «Սուրբ Աւետարանս ոսկեզարդ և արծաթապատ ի թվին ՌՃԴ (=1654)ին լեալ է յիշատակ Սուրբ Աթոռոյս Երուսաղէմիս, սակայն ի թվին ՌՃԾԸ (=1709) ընդ բազում այլ ևս աւետարանաց, խաչից և այլ սրբութեանց գրաւեցեալ էր ի ձեռս այլազգի պարտատերաց։ Իսկ քաղցրութեամբն ու գթութեամբ Աստուծոյ յորժամ պարգևեցաւ մեզ հովիւ բարի և արի, և հայրապետ Սրբոյ Աթոռոյս՝ Տէր Գրիգոր Բաղիշեցի արեգնապայծառ և սրբազան մեծ վարդապետն որ զամենայն գրաւեալ սըբ-